ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ 2025թ. հուլիսի 1 -ին, N 150 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԳԱՌՆԱՀՈՎԻՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍՐԱՊ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 61-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Գառնահովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սրապ Գրիգորյանի 2025 թվականի հուլիսի 1-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Գառնահովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սրապ Գրիգորյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2024-2025 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2025 թվականի հուլիսի 10-ից օգոստոսի 13-ը ներառյալ:

2.Սրապ Գրիգորյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Գառնահովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Գառնահովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Համբարձում Թադևոսյանի վրա:

3.Սրապ Գրիգորյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 14-ից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 7/4/2025 11:46:09 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ